Արձանագրություն N 2
ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-22/ՌԾ-1 ծածկագրով գնանշման հարցման
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

14.12.2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Սարգսյանը, անդամներ՝ Արև Մանուկյանը, Լիլիթ Գևորգյանը, քարտուղար Գոհար Թադևոսյանը և <<Սպայդեռ>> ՍՊԸ-ի լիազար ներկայացուցիչը:

Օրակարգ
Հայտերի բացման և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-22/ՌԾ-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արսեն Սարգսյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

1. «Սպայդեռ» ՍՊԸ (ք. Երևան Դավիթաշեն 1 թղմ. 3 շ. 9 բն. հեռ. 055-60-09-60, spi-der@bk.ru)
2. Աննա Սահակյան ԱՁ (ք. Երևան Քանաքեռ Ֆանարջյան 37, հեռ. 077-44-77-54, atsgnumner@gmail.com)

Մասնակիցների գնային առաջարկները

չ/հ	Ծառայության անվանում	«Սպայդեռ» ՍՊԸ	Աննա Սահակյան ԱՁ	Գնման գին ՀՀ դրամ
1	սպասարկման ծառայություններ ռեստորաններում, որտեղ հաճախորդների շրջանակը սահմանափակված չէ	2.374.000	2.300.000	2.400.000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝
- հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց հիմք ընդունելով
- ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը (անգործության ժամկետը՝ կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել),տվյալ հրավերի դեպքում անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացույցային օր,
- հրավերի 9.2 կետը (անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը),
- ծառայության մատուցման ժամկետը հրավերով սահմանվել է 22.12.2022թ,
- ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Հաշվի առնելով վերոնշված կետերը ընտված մասնակցի հետ հնարավոր կլինի պայմանագիր կնքել 2022թվականի դեկտեմբերի 30-ից ոչ շուտ: Հետևաբար գնահատող հանձնաժողովը որոշեց գնման

ընթացակարգը չկայացած հայտարարել համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի (դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Արսեն Սարգսյան

անդամներ՝ _____ Արև Մանուկյան

_____ Լիլիթ Գևորգյան

քարտուղար՝ _____ Գոհար Թադևոսյան